

ՄԵԼԱՆՅԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԸ ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ

24.01.2019 11:37



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը 21.01.2019 թվականի նիստում քննության առնելով Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար նշանակելու հարցը, որոշում է կայացրել **փաստաբան Մելանյա Առուստամյանին** նշանակել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի պաշտոնում: Մելանյա Առուստամյանը վերանշանակվել է, քանի որ վերջին չորս տարիների ընթացքում արդյունավետ է ղեկավարել գրասենյակը:

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին փաստաբանների պալատի նախագահի ներկայացմամբ նշանակում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ առնվազն տասը տարվա փաստաբանական ստաժ ունեցող անդամների կազմից, չորս տարի ժամկետով:**

Հիշեցնենք, որ Մելանյա Առուստամյանն ունի փաստաբանական գործունեության ավելի քան 22 տարվա ստաժ (արտոնագիր № 7, տրված 29.08.1996թ.), իսկ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի պաշտոնն առաջին անգամ ստանձնել է 22 փաստաբանների պալատի խորհրդի 03.02.2015թ. թիվ 03/5-Ա որոշմամբ՝ չորս տարի ժամկետով:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })